



ԼՂՀ ԿԱ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ  
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

---

---

2013 թվականի գործունեության  
տարեկան  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ մԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2013 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից իրականացված աշխատանքների հիմնական նպատակն եղել է ԼՂՀ կառավարության 2013 թվականի գործունեության միջազգայնացման ծրագրի և ԼՂՀ կառավարության ռազմավարական ծրագրերով նախատեսված ընդերքօգտագործման և բնապահպանության ոլորտների գծով գերակա խնդիրների կատարման ապահովումը:

**Օրենսդրություն**

2013 թվականին օրենսդրական դաշտի բարելավման, ինչպես նաև ընդերքօգտագործման և բնապահպանական ոլորտը կանոնակարգելու նպատակով ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից մշակվել են մի շարք իրավական ակտեր՝

✓ Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգիրքը, որով կարգավորվել են ընդերքօգտագործման և բնապահպանական ոլորտներում տեղ գտած մի շարք հարցեր կապված մասնավորապես լիցենզավորման գործընթացի, լիցենզիայի գործողության ժամկետի, օգտակար հանածոների պաշարների վերագնահատման, ընդերքն օգտագործելիս բնությանը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության ու անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունների, ընդերքօգտագործման աշխատանքների կատարման անվտանգության ապահովման սկզբունքների հետ,

✓ «Բնապահպանական վերահսկողության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, որով կարգավորվել է ընդերքօգտագործման ժամանակ շրջակա միջավայրի և ընդերքի պահպանության նկատմամբ վերահսկողական գործառույթների հետ կապված հարաբերությունները.

✓ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, որով կարգավորվել է բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների կողմից համապատասխան լիազոր եւ հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունների ներկայացման կարգը և վճարների վճարման միասնական ժամկետները,

✓ «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը, որով արգելվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների որսը, ինչպես նաև սահմանում է որսի արգելված ձևերը, միջոցները, գործիքները,

✓ «Կենդական աշխարհի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը, որով կարգավորվել են անազատ եւ կիսաանազատ պայմաններում վայրի կենդանիների պահելու պայմանները, ինչպես նաև անազատ եւ կիսաանազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում Կարմիր գրքում գրանցված կենդանիների օգտագործումը վերարտադրության, վերակլիմայավարժեցման, առետրի, գիտահետազոտական, ուսումնական, առողջապահական, կենսաբանական թեստավորման, սննդի կամ այլ կենդանիների համար որպես կեր օգտագործելու, մորթի եւ այլ արգասիք ստանալու, մշակութային, գեղագիտական, բնության մեջ բաց թողնելու, որսի եւ որպես որսամիջոց (որսկան թռչուն, խաբսաբաղ ) օգտագործելը,

✓ «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը, որով սահմանվում է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափը:

2013 թվականին մշակվել և հաստատվել են ԼՂՀ կառավարության 14 որոշում, 17 գերատեսչական ակտ:

### **ԼՂՀ ընդերքի ուսումնասիրության միջոցառումների 2013 թվականի ծրագիր.**

ԼՂՀ ընդերքի ուսումնասիրության միջոցառումների 2013 թվականի ծրագրի շրջանակներում ԼՂՀ լեռնահանքային պոտենցիալի բարձրացման և ուսուցումնալսողական օժանդակելու նպատակով 2013 թվականին ուսումնասիրվել են մի շարք մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների հանքերակումներ: Ուսումնասիրություններն իրականացվել են ԼՂՀ Քաշաթաղի և Շահումյանի շրջաններում:

Աշխատանքների արդյունքում նոր մեկնաբանություն են ստացել Ոսկեսարի ոսկու և Գալիքի պղնձի հանքերակումները, հայտնաբերվել են Որոտանի տրավերտինի, Զուարի անդեզիտաբազալտային լավաբրեկչիաների հանքավայրերը, առավել մանրամասն հետազոտվել է Կովսականի մարմարացված կրաքարերի հանքավայրը, գնահատվել են կրաքարերի որպես երեսպատման սալիկներ օգտագործելու հեռանկարները, ինչպես նաև ավարտին են հասցվել Թութխուն գետի ավազանում 2012 թվականին սկսած ուսումնասիրությունները:

Հանրապետության օգտակար հանածոների մասին եղած տվյալների համակարգման նպատակով սկսվել են 1:200000 մասշտաբի երկրաբանական հիմքի վրա մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների քարտեզների կազմումը:

### **ԼՂՀ պետական անտառային ֆոնդում անտառային միջոցառումներ 2013 թվականի ծրագիր.**

Անտառների պահպանությանը, պաշտպանությանը, վերարտադրմանը և անտառօգտագործմանն ուղղված մի շարք միջոցառումներ են իրականացվել, մասնավորապես բնական աճի աջակցման, բնական աճի ուսումնասիրության,

անտառային ճանապարհների կառուցապատման ու վերանորոգման և բնափայտի մթերման տարեկան չափաքանակի ապահովման ուղղությամբ:

Բնափայտի բնական աճի աջակցմանն ուղղված ծրագրով իրականացվել է 400 հա տարածքի փխրեցում, որից՝

- 170 հա Հադրուփի անտառտնտեսությունում,
- 70 հա Քաշաթաղի անտառտնտեսությունում,
- 130 հա Մարտակերտի անտառտնտեսությունում
- 30 հա Ասկերանի անտառտնտեսությունում:

### **ԼՂՀ բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների 2013 թվականի ծրագիր.**

ԼՂՀ բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների 2013 թվականի ծրագրի շրջանակներում և ԼՂՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 1053 որոշմամբ հաստատված 91 գիտական, բնապատմական և գեղագիտական արժեք ներկայացվող բնության հուշարձաններից իրականացվել են 7 բնության հուշարձանների տարածքների չափագրման, հստակեցման, քարտեզագրման աշխատանքներ, որոնց արդյունքում կազմվել և հաստատվել են 7 բնության հուշարձանների անձնագրեր:

### **ԼՂՀ-ում գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների 2013 թվականի ծրագիր.**

ԼՂՀ-ում գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների 2013 թվականի ծրագրի իրականացվել են գիշատիչների գլխաքանակի կարգավորման, կենսատեխնիկական միջոցառումներ: 2013 թվականին որսված 60գայլերի դիմաց սահմանված կարգով որսորդներին տրամադրվել են խրախուսումներ:

### **Ընդերքօգտագործում**

Հաշվետու ժամանակաշրջանում լիազոր մարմնի կողմից ուսումնասիրվել են ներկայացված հանքարդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության լիցենզիա ստանալու 10 հայտ, որի արդյունքում տրամադրվել է 10 ընդերքօգտագործման լիցենզիա, որից՝

- 6 հանքարդյունահանման,
- 4 երկրաբանական ուսումնասիրության,

Դադարեցվել են 9 ընդերքօգտագործման լիցենզիա, որից՝

2013 թվականին ԼՂՀ պետական բյուջե է մուտքագրվել 53904000 դրամ պետական տուրք և 4192027 դրամ կոնցեսիոն վճար:

### **Բնապահպանական փորձաքննություն**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնելու նպատակով տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումները քննարկելուց և ներկայացված փաստաթղթերի լիարժեքությունը ստուգելուց հետո կնքվել են պայմանագրեր, և օրենքով սահմանված կարգով իրականացվել են համապատասխան փորձաքննություններ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ներկայացվել նախատեսվող գործունեությունների 58 հայտ, որից 57-ին տրվել է դրական եզրակացություն, 1 հայտ գտնվում է փորձաքննական ընթացքի մեջ:

2013 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2012 թվականին կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	2013 թվական		2012 թվական	
		Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը	Գումարը (հազ. դրամ)	Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը	Գումարը (հազ. դրամ)
1	Բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու հայտ	58	6065.6	22	2049.0
2	Կնքվել է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու հայտ	58	-	22	2049.0
Ընդամենը՝		x	6056.6	x	2049.0

**Ծառահատումների թույլտվություններ**

Ստեփանակերտի քաղաքապետարանի, ԼՂՀ շրջվարչակազմերի, գյուղական համայնքների, տարբեր կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից ծառահատում և ծառերի երիտասարդացում իրականացնելու նպատակներով ներկայացված 66 դիմումների հիման վրա տեղում կատարվել են դրանց կենսական վիճակների ուսումնասիրություններ և համապատասխան քննարկումների արդյունքում տրամադրվել՝ 62 թույլտվություն: 4 դիմում մերժվել է, ծառահատումների պայմանները իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանելու պատճառով:

2013 թվականին ծառահատման և ծառերի երիտասարդացման թույլտվությունների քանակը 2012 թվականի համեմատ ավելացել է 3-ով, իսկ մերժումների քանակը նվազել է 4-ով:

**Որսի թույլտվություններ**

Որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների որսաշրջանում՝ որսորդներին և ձկնորսներին, համապատասխան փաստաթղթերի արժանահավատությունը ստուգելուց և ընդունելուց հետո, տրամադրվել են 96 թույլտվություններ, այդ թվում՝ 4-ը վայրի խոզերի (վարազների) որսի, 87-ը այլ վայրի կենդանիների տեսակների համար, իսկ 4-ը թառփով ձկնորսություն իրականացնելու համար:

Տրամադրված թույլտվությունների դիմաց պետական բյուջե է մուտքագրվել 317.2 հազ. դրամ:

Այս ոլորտի աշխատանքները կատարվել են տարվա որսաշրջանի ընթացքում և վերահսկվել են:

2013 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2012 թվականի ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	2012 թվական		2011 թվական	
		Քանակը	Գումարը (հազ. դրամ)	Քանակը	Գումարը (հազ. դրամ)
1	Կենդանատեսակների որսի թույլտվություններ	428 հատ	303.70	6 հատ	300.0
2	Ցանցով ձկնորսություն իրականացնելու թույլտվություններ	-	-	366 կգ	11.0
3	Թափով ձկնորսություն իրականացնելու թույլտվություններ	450 կգ	13.5	700 կգ	21.0
Ընդամենը՝ մուտքագրվել է պետբյուջե		x	317.2	x	332.0

### **Ջրային ռեսուրսներ**

Տնտեսավարող սուբյեկտների կողմից ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով ներկայացված հայտերի հիման վրա, ԼՂՀ Ջրային օրենսգրքի պահանջներին ջրօգտագործման պայմանների համապատասխանության ստուգման նպատակով, տեղում ուսումնասիրվել է 31 ջրառի օբյեկտ և համապատասխան քննարկման արդյունքում տրամադրվել ջրօգտագործման թույլտվություններ: Տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների դիմաց ԼՂՀ պետբյուջե է մուտքագրվել 310,0 հազ. դրամ:

2013 թվականին ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման քանակը 2012 թվականի համեմատ մնացել է անփոփոխ, երկարաձգումների քանակը՝ ավելացել է 2-ով, մուտքերը պետական բյուջե 2012 թվականի համեմատ չեն ավելացել:

### **Հողերի կառավարում**

ԼՂՀ շրջանների վարչակազմերի և համայնքների ղեկավարների դիմումների համաձայն, հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ, իսկ բնապահպանական փորձաքննություն իրականացնելուց հետո տրամադրվել են գրավոր համաձայնություններ՝ դրանց փոփոխման վերաբերյալ: ԼՂՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի <<Հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) փոփոխման կարգը սահմանելու մասին>> N85 որոշման պահանջներին չհամապատասխանող դիմումները մերժվել են:

## **Տեսչական վերահսկողական աշխատանքներ**

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության տարածքում բնապահպանական պետական տեսչության կողմից կատարվել են 35 ստուգայցեր՝ ըստ «Բնապահպանական վերահսկողության մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ, 24-27-րդ հոդվածների պահանջների:

Բնապահպանական պետական տեսչության կողմից ստուգայցերի ընթացքում հայտնաբերվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացքավորվել են 81 տարբեր տեսակի իրավախախտումներ, որոնց հաշվարկված վնասի չափը կազմել է 28944600 դրամ, իսկ վարչական տուգանքը՝ 1020000 դրամ:

### **Կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ոլորտում՝**

• Ապօրինի ծառահատման փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 31 իրավախախտում, որոնք կատարվել են 34 քաղաքացիների կողմից:

1. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 65-րդ և 66-րդ հոդվածներով վարչական պատասխանատվության է ենթարկվել 2 քաղաքացի՝ 100.0 հազ. դրամի չափով.

2. Կազմված 34 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 28091340 դրամ.

3. Ոստիկանություն է ուղարկվել 15 վարույթ՝ 25741000 դրամի չափով.

• Ապօրինի որսորդության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 17 իրավախախտում, որոնք կատարվել է 21 քաղաքացիների կողմից:

1. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 88-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 15 քաղաքացի՝ 710000 դրամի չափով, որից կամավոր մուծվել է պետբյուջե 610000 դրամ:

2. Կազմված 17 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 272000 դրամ.

• Ապօրինի ձկնորսության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 6 իրավախախտում, որը կատարվել է 7 քաղաքացու կողմից:

1. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 89-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 2 քաղաքացի՝ 130000 դրամի չափով, որը կամավոր մուծվել է պետբյուջե:

### **Բնապահպանական պետական փորձաքննության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ոլորտներում**

Զրոգտագործման թույլտվության ճշտության փաստի առթիվ ստուգվել է 21 կազմակերպություն:

#### **Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում՝**

Ապօրինի ընդերքօգտագործման փաստով արձանագրվել է 2 իրավախախտում, որոնք կատարվել են 1 կազմակերպության կողմից:

1. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 59-րդ հոդվածով կազմակերպությունը վարչական պատասխանատվության է ենթարկվել 80000 դրամի չափով, որը կամավոր մուծվել է պետբյուջե:

2. Կազմված 2 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 166250 դրամ:

**Բնապահպանական և բնօգտագործման վճարների ոլորտում**

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ հաշվետվություն են ներկայացրել 52 հիմնարկ-ձեռնարկություն:

**«Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն.**

2013 թվականին «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2013 թվականին շարունակվել են աշխատանքներ ուղղված երկրաբանական ֆոնդի ձևավորմանը և համալրմանը, 2013 թվականին «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպության երկրաբանական փորձարկման լաբորատորիայի կողմից, օգտակար հանածոների որակը գնահատելու նպատակով, սկսվել են իրականացվել հանքային հումքի հսկողական անալիզներ:

2013 թվականին «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանման ծախսերը կազմել է 56781200 դրամ, որը ֆինանսավորվել է պետբյուջեից կազմակերպության հաստիքների քանակը կազմել է 22 հաստիք, ավտոմեքենաների քանակը 4:

**«Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.**

ԼՂՀ կառավարության որոշմամբ 2013 թվականի համար հաստատված 7000մ<sup>3</sup> գործափայտի և 88860մ<sup>3</sup> վառելափայտի մթերման համար անտառօգտագործողներին տրամադրված թույլտվությունների հիման վրա <<Արցախանտառ>> ՊՈԱԿ-ի և անտառօգտագործողների միջև կնքվել են բնափայտի մթերման պայմանագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում մթերվել է՝

- 5790 խմ գործափայտ
- 93870 խմ վառելափայտ:

2013 թվականին «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանման ծախսերը կազմել է 165614400 դրամ, որը ֆինանսավորվել է պետբյուջեից, կազմակերպության հաստիքների քանակը կազմել է 200 հաստիք, ավտոմեքենաների քանակը 6:

**Վարչատնտեսական գործունեություն և գործավարություն**

**Բյուջետային միջոցների հաշվին համակարգի պահպանման ծախսեր**

(հազ. դրամ)

Տարի	Նախահաշվային պլան	Ֆինանսավորում	Մնացորդ
2012թ.	62300.0	57400.0	4900.0
2013թ.	94508.7	79857.867	14650.833

**Վարչատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշներ**

Տարի	Աշխատողների միջին ցուցակային թիվը	Ավտոմեքենաների քանակը տարեվերջին
2012թ.	34	3
2013թ.	44	3



ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմ է մուտքագրվել իրավաբանական անձանցից և քաղաքացիներից ստացված 337 գրություն, պետական մարմիններից և նրանց ենթակա կազմակերպություններից ստացված 425 գրություններ:

Ընդանուր առմամբ 2013 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմ է մուտքագրվել է 1028 մտից փաստաթուղթ, ելքագրվել՝ 905 գրություն: